

Լեհաստանում վրացիները հովանավոր ուժ էին հանդիսանում լեհերի համար: Դա այն ուժն էր, որը երբեք չէր խորտակի վրացիների ապագայի հանդեպ ունեցած հույսը: Այսպիսով, Լեհաստանը իսկապես ապաստարան էր վրացիների համար, այսպես ասած՝ երկրորդ հայրենիք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՅՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հ. Մ. ՄՈՒՍԵՍՅԱՆ

*ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիայի պատմության ինստիտուտի հայցորդ*

Ալեքսանդր Քալանթարը խմբագրել է «Մշակ» լրագիրը շուրջ 20 տարի՝ 1893-1913թթ: Ստանձնելով «Մշակի» խմբագրի պաշտոնը՝ Ալ. Քալանթարը շարունակել է Գր. Արծրունու ավանդույթները և թերթի էջերում լուսաբանել հայոց կյանքին վերաբերող բազմաթիվ խնդիրներ:

Ալ. Քալանթարը ծնվել է 1855թ. Վերին Ագուլիսում: Ընտանիքով տեղափոխվել է Բաքու, որտեղ ռեալական գիմնազիան ավարտել է 1875թ.: 1875-1879թթ. ուսանել է Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայում՝ ստանալով գյուղատնտեսության թեկնածուի աստիճան: 1875-1879թթ. կառավարել է Եդիմոնովի կաթնատնտեսական դպրոցը: Այնուհետև Պետական կալվածների միմստրության կողմից ուղարկվում է արտասահման՝ Գերմանիա, Անգլիա, Դանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ֆրանսիա՝ ուսումնասիրելու կաթնատնտեսության գործնական դրությունն այդ երկրներում: 1883թ. վերադառնալով, նշանակվում է մի համաձայնագրով անդամ, որը հետագոտում էր Ռուսաստանի անասնապահության դրությունը: Այս առաքելությամբ Քալանթարը 1883-1888թթ. ճանապարհորդել է Ռուսաստանի 15 նահանգներում, ապա աշխատանքի ուղարկվել Կովկաս՝ ուսումնասիրելու պետական արոտատեղիները և անասնապահության պայմանները: Հետագոտության արդյունքը եղավ նրա կազմած «Անասնապահության վիճակը Կովկասում» լուրջ և մեծահատոր աշխատությունը, որը հրատարակվեց 1890թ: Սա հնարավորություն տվեց նաև, որ Քալանթարը ոտքի տակ տար ամբողջ Կովկասը, ճանաչեր այդ երկրամասը: Քալանթարը շուրջ 140 գյուղատնտեսական աշխատությունների հեղինակ էր և մեծ համբավ էր վայելում որպես դասախոս: Քալանթարը հիմնադրել և ղեկավարել է «Կովկասի հայկական գյուղատնտեսական ընկերությունը», ընտրվել Կովկասի գյուղատնտեսական ընկերության պատվավոր անդամ, նա խմբագրել է «Кавказское сельское хозяйство» թերթը: Քալանթարը ծավալել է հասարակական-քաղաքական և հրապարակախոսական գործունեություն, կարդացել հրապարակային դասախոսություններ, հոդվածներ է տպագրել տարբեր պարբերականներում: Քալանթարի մտածողության և հոգածության մշտական առարկան եղել է իր արդար աշխատանքով ապրուստ վաստակող ժողովուրդը: Նա մանրակրկիտ ուսումնասի-

րել է գյուղը, բազմատեսակ միջոցներ է գործադրել պարզելու նրա կարիքները, պահանջները և ծրագրել մի շարք բարեփոխումներ՝ բարձրացնելու ժողովրդի մտավոր, կրթական և տնտեսական վիճակը: Քալանթարը նույնպես ազդված էր ռուս մտավորականների «Դեպի գյուղ» կոչից և անմնացորդ նվիրվեց այս գաղափարին, քանզի նա ևս գտնում էր, որ բարգավաճ տնտեսությունն է ապահովում ազգերի առաջադիմությունն ու զարգացումը: Նա 38 տարի շարունակ եղել է կովկասահայ գյուղացու խորհրդատուն և գտնում էր, որ հայ մտավորականության վրա է ընկնում կուլտուրական առաքելության պարտականությունը: Հավասարապես սիրում էր Շիրակի, Ղարաբաղի, Սուրմալուի, Ապարանի, Ջանգեզուրի հայ գյուղերը, ուր հաճախակի այցելության գնալով՝ ամեն անգամ հետը տանում էր նոր խոսք, նոր գործիք ու նոր փորձ: Քալանթարը եզակի կովկասագետ էր, ով իր շուրջն էր ժողովել աշակերտների և երիտասարդների մի մեծ բանակ, որոնց հետ նա մեկնում էր երկրի հեռավոր անկյուններ և գյուղացիների աչքի առջև փորձարկում նոր կատարելագործված գործիքներ: Քալանթարի ջանքերով կազմակերպվել է «Հայոց տնայնագործական ընկերությունը», որի անփոփոխ նախագահն էր մինչև մահը: Քալանթարը զբաղվել է նաև գրական գործունեությամբ: «Սիրող», «Վրժին» գրական անուններով նա տպագրել է պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ, որոնցում արտացոլված են ժամանակի հայ հասարակական կյանքը, գյուղում կատարվող տնտեսական տեղաշարժերը, երիտասարդության ձգտումները և այլն: Թողել է հարուստ գրականագիտական և թատերագիտական ժառանգություն: Երկար տարիներ գլխավորել է Թիֆլիսի «Հայ հրատարակչական ընկերությունը», թարգմանել Մարկ Տվենի, ֆրանց Յոհանսի և ուրիշ հեղինակների ստեղծագործությունները: Քալանթարը մեծ նշանակություն էր տալիս գյուղատնտեսական թեմաներին: Նրա կարծիքով գյուղի տնտեսական բարգավաճումը և գյուղական համայնքի կրթվածությունը պետք է լինի այն հիմքը, որի վրա կբարձրանա երկրի ծաղկումն ու զարգացումը: Քալանթարը ժամանակի նշանավոր գործիչներից մեկն էր, ով ազգային ու քաղաքական հարցերում միշտ առաջին շարքերում էր: Նրա՝ միայն «Վրժին» և «Սիրող» կեղծանուններով գրված հոդվածները կարող են մի քանի հատորներ կազմել:

«Մշակը» խմբագրելու տարիներին Ալ. Քալանթարը գրեթե թողել էր գյուղատնտեսի իր մասնագիտությունը և հանդես էր գալիս որպես հասարակական գործիչ: Գր. Արծրունու շրջանում թերթի ուղղությունը միանգամայն բավարարում էր ցարական գրաքննության պահանջները: Այս ամենով հանդերձ Ալ. Քալանթարը թերթի էջերում կարողացել է լուսաբանել թե՛ արևմտահայությանը, թե՛ հայ գյուղացուն և հայ կյանքի ամենատարբեր խնդիրներին վերաբերող հոդվածներ: «Մշակի» 1893թ. առաջին համարում Քալանթարը գրում է. «Հավատ դեպի գաղափարականը, հավատ դեպի մարդը և մարդկայինը, հավատ դեպի ազնիվ գործունեության հաղթական արդյունքը, ահա այդ հավատը պետք է համակի մեզ նվիրվելու անխոջ աշխատանքին և տանելու ամեն տեսակի նեղություններ, հարձակումներ, բամբասանքներ և զրկանքներ»:¹ Ազգամվեր գործիչը, իր դավանանքին հավատարիմ, անտարբեր չէր մնում հայ կյանքի տագնապալի իրադարձություններին: Մեկ այլ՝ 1895թ. հունվարի 1-ի առաջնորդող հոդվածում Քալան-

¹ «Մշակ», 1893, N 1:

թարը գրում է. «Այսօր «Մշակը» մտնում է իր գոյության 23-րդ տարեշրջանը: Անցավ ամբողջ 22 տարի: 22 տարի մաշող, ծանր, անընդհատ, աննկարագրելի դժվարություններով, շրջապատված աշխատանքի մեջ, որ կլանեց անթիվ ուժեր և մաշեց շատ թանկագին կյանքեր... Բայց այդ 22 տարվա ծանր, մաշող աշխատանքը կապված է եղել հայոց կյանքի ամենափայլուն պահերի հետ, անխզելի կերպով շաղկապված է եղել այն բոլոր շարժումներին, որոնք կազմում են մեր կրանքի աղը, նրա առաջադիմությունը, նրա ոգին, և ահա այդ սփոփիչ փաստն է, որ երկար տարիների ընթացքում ոգևորեց թե՛ «Մշակի» հիմնադիրն, թե՛ «Մշակի» խմբագրության անդամներին և աշխատակիցներին՝ յուրաքանչյուր տարվա սկզբին տալով բոլորովին նոր եռանդ, նոր ուժեր, նոր ոգևորություն... »:² Այնուհետև «Մշակի» խմբագրականը հավաստիացնում է, որ որքան էլ դժվար լինի, 1895 և հաջորդող տարիները գնալու են նույն ուղղությամբ, նույն ազնիվ ճանապարհով, նույն դրոշի տակ: «Մշակի» էջերում Քալանթարը տպագրել է բազմաթիվ հոդվածներ: Քալանթարը վերլուծության է ենթարկում արևմտահայության կյանքը, մանրամասնորեն անդրադառնում Սասունի դեպքերին: Հետագայում այդ հոդվածները տպագրվեցին առանձին՝ «Սասունը» գրքույկով: 1895թ. գրած «Նամակ Գերմանիայից» հոդվածում նա անարգանքի սյունին է գամում Մեծ տերությունների քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ: Թուրքիայի հայահալած գործունեությանը նա անդրադարձել է նաև տիկին Ռամզելի՝ «Ամենօրյա կյանքը Թուրքիայում» գրքի գրախոսականում:

Ստեփան Մալխասյանցի, Լեոյի և մյուսների հետ Քալանթարը «Մատենագրություն» բաժնում հաճախ նյութեր է հրապարակել, որոնցում արժարժեք է հասարակությանը հուզող ամենատարբեր խնդիրներ: Ուղեգրության ձևով գրված այս հոդվածներում նա անդրադառնում է դպրոցական, ժողովրդական ընթերցասիրության, ընտանեկան դաստիարակության և բազմաթիվ այլ հարցերի՝ ցուցաբերելով մտքի սրություն, փաստերը խորությամբ վերլուծելու մեծ շնորհք: Քալանթարն ու նրա գործընկերները գտնում էին, որ լուսավորությունն իր նպատակին կծառայի, եթե թափանցի գյուղական ու քաղաքային բովանդակ ժողովրդի մեջ, երբ մատաղ սերունդը հնարավորություն կունենա ստանալու տարրական պարտադիր կրթություն և մանկավարժական նորագույն պահանջներին համապատասխան մտավոր, բարոյական և ֆիզիկական դաստիարակություն: Քալանթարը գրաքննադատական հոդվածների հեղինակ է, օրինակ՝ Պեպոյի 30-ամյակին նվիրված հոդվածում հեղինակը իրավացիորեն հարց է բարձրացնում, թե անցել է 30 տարի, սակայն կրթե՞լ ենք արդյոք Պեպոների զավակներին, բարվոքե՞լ ենք նրանց արհեստը, կազմակերպե՞լ ենք օգնություն, ձեռք ենք առել վերջ դնելու այս հարստահարություններին, որոնց շնորհիվ նրանց տները քանդվում են և կործանվում: «Պեպոն 30 տարի հետո այդ հարցը դնում է մեր առաջ: Ինչ կարող ենք մենք պատասխանել»:³ Քալանթարը իրավացիորեն ծաղկում էր հասարակության այն անդամներին, ովքեր հաշտվողականություն էին ցուցաբերում իրականության նկատմամբ և ընտրում էին «յուլա գնալու» ճանապարհը: Նա պնդում էր, որ պետք է մերկացնել գողին, ազնվության դեմ մեղանշողին, հարս-

² «Մշակ», 1895, N 1:

³ «Մշակ», 1900, N 91:

տահարողին, անբարոյականին, այլապես՝ «գուցե կարծում եք, թե մարդ կարող է լինել կիսագող, կիսաազնիվ, կիսահարստահարող, կիսաանբարոյական, կիսամարդասպան»:⁴ Ալ. Քալանթարի օրոք «Մշակը» հետևողականորեն անդրադարձել է Հայաստանին, հայ ժողովրդին, հատկապես թուրքահայերին վերաբերող հարցերին:

Ալ. Քալանթարը կաթվածահար եղավ 1913թ. հոկտեմբերի 20-ին, Րաֆֆու գերեզմանի վրա, նրա մահվան 25-ամյակի օրը: Ստ. Մալխասյանցը գրում է. «Մի անգուգական գործիչ էր նա, որին հավասարապես քննադատում և հավասարապես հարգում էին բոլորը, առանց կուսակցական խտրականության: Նա պատկառանք էր ներագրում բոլորին իր կոռեկտ բնավորությամբ և գործելակերպով: Գիրքը նրա մեջ տեղի էր տվել բանականության...Նա կարող էր ունենալ հակառակորդներ, բայց չուներ թշնամիներ, արհամարողներ: Եվ սրա հետ միասին նա անհողողող էր իր սկզբունքներում, անշեղ՝ իր ընտրած գործունեության շավղում»:⁵

К 100-ЛЕТИЮ АЛЕКСАНДРА КАЛАНТАРА

Е. М. МУСЕСЯН

В статье дано общее понятие об Александре Калантаре как о редакторе, его биография и деятельность. Будучи агрономом и общественным деятелем Александр Калантар в своей деятельности пытался быть полезным армянскому крестьянину, армянскому читателю. Получив должность редактора газеты "Мшак", Калантар устойчиво поднимал вопросы об Армении, армянского народа, особенно вопросы, касающиеся западных армян, периодически поднимал вопросы учебы и освещенности армянского народа, обсуждал вопросы литературы и искусства, знакомил читателя с наилучшими произведениями русской и международной литературы. Калантар автор около 140 сельскохозяйственных работ и пользовался большой репутацией как преподаватель.

TO THE 100 UNNIVERSARY OF ALEXANDR KALANTAR

H. M. MUSESYAN

A general hink of the biography and the activity of the editor Alexandr Kalantar is given in the article. In the agricultural and the public figure Kalantar tried to be useful for Armenian villager and Armenian reader in the border of his activity. Taking up the position of the editor of the newspaper Mshak Kalantar consistently touches upon Armenia, Armenian espessialy the questions of Western Armenian, periodicaly considered the problems connected which the education and illustration of Armenians, discussed the principal question of literature and art he introduced the reader the best example of Russian and world-wide literature. Kalantar is the author of about 140 agricultural works and had great reputation as a lecturer.

⁴ «Մշակ», 1900, N 303:

⁵ «Մշակ», 1913, N 21: